

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ

Հայ լեզվաբանության ոլորտներում վերջերս սկսեցին լրջորեն խոսել կառուցվածքային կամ նոր լեզվաբանության սկզբունքների օգտակարության մասին, փորձեցին կիրառել այդ սկզբունքները: Անշուշտ, դասական քերականության մեջ կան կառուցվածքային լեզվաբանության տարրեր, բայց դրանք իրեն հետևողական, կանոնավորված սկզբունք չեն կիրառված: Հայ լեզվաբաններից է. Աղայանը և Գ. Ջահուկյանը վերջին տարիներս լուրջ ջանքեր են արել հայոց լեզվի ուսումնասիրության մեջ կառուցվածքային լեզվաբանության մի շարք սկզբունքներ կիրառելու գործում: Մասնավորապես 1967 թ. լույս տեսան արդի հայերենին նվիրված երկու արժեքավոր աշխատություններ, դրված նորագույն լեզվաբանության եղանակների ու միջոցների կիրառմամբ: Գրանք էն պրոֆ. է. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (ԳԱ հրատ.) և պրոֆ. Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» («Միտք» հրատ.) ուսումնասիրությունները:

Այս երկու աշխատությունների հրատարակումը, մեր կարծիքով, կարևոր երևույթ է հայ լեզվաբանության մեջ, և ցանկալի է, որ նրանց հետևեն լեզվաբանական նոր սկզբունքներով դրված նաև ուրիշ գրքեր ու հոլովածներ հայոց լեզվի տարբեր կողմերի վերաբերյալ, ինչպես և հրատարակվեն ձեռնարկներ ու դասագրքեր այդ սկզբունքների կիրառմամբ: Այլ խոսքով, հայ լեզվաբանությունը, ըստ երևույթին, ավելի ու ավելի պետք է որդեգրի կառուցվածքային լեզվաբանության կարևոր սկզբունքները: Դարստանա նրանցով: Իսկ կլինի հայ լեզվաբանության դարձացման նոր փուլը:

Գ. Ջահուկյանն իր աշխատությունն սկսում է արդի հայերենի (արևելահայ ճյուղի) ուսումնասիրման ավելի քան 250 տարվա պատմության պարբերացմամբ: Առաջին ուսումնասիրողը եղել է Յ. Շրյոդերը (ի դեպ ոչ թե հոլանդացի, այլ գերմանացի, թեև ապրել է Հոլանդիայում), որի «Արսման լեզուի դանձո-ով» (1711 թ.) սկսվում է արդի հայերենի քերականության ուսումնասիրությունը:

Արևելահայերենի քերականության ուսումնասիրման անցած ուղին Գ. Ջահուկյանը բաժանում է երկու զիսավոր շրջանի՝ դրաբարատիպ (մինչև Մ. Արեղյանը) և ինքնատիպ (սկսած Մ. Արեղյանից), վերջինս իր հերթին բաժանված է երեք ենթաշրջանի՝ ա) ձևական (Մ. Արեղյանի), բ) իմաստային-իմացարանական (սկսած 30-ական թթ.) և գ) կառուցվածքա-հարաբերակցային (այժմ սկզբնավորված): Այս բաժանումը, թվում է միանգամայն հիմնավոր: Գ. Ջահուկյանը ցույց է տալիս նաև, որ արևելահայերենի հոլովման համակարգի առաջին նկարագրողը՝ Յ. Շրյոդերը մեր լեզվում դիտել է հինգ հոլով, նույնքան հոլով է նկարագրել նաև հայերենի ինքնատիպ քերականության հիմնադիր Մ. Արեղյանը և, ի վերջո, արդի հայերենում նույն քանակի հոլովներ դիտելը մի շարք լեզվաբանների կողմից հատկանշական է դարձել հայոց լեզվի ուսումնասիրության նորագույն շրջանի համար:

Թեև Գ. Ջահուկյանը որոշակիորեն չի ընդգծում հոլովների քանակի հարցի հատուկ կարևորությունը և այդ հարցին նվիրել է իր աշխատության յոթ բաժիններից սոսկ մեկը, սակայն անկասկած է, որ այդ հարցը ամենից ավելի կարևորն է արդի հայերենի հոլովման համակարգի քննության մեջ և ամենակարևորներից մեկը առհասարակ հայ քերականագիտության ժամանակակից փուլում: Այդ հարցի տարբեր լուծումները (հինգ, յոթ, վեց) պայմանավորված են լեզվաբանների տարբեր պատկերացումներով ու մտածելակերպով և, ըստ երևույթին, հայ քերականագիտության մեջ առանձին ուղղություններ են հատկանշում կամ ձևավորում:

1 Թանավոր ելույթներում բաղմիցս օգտագործված՝ հնգակումներ, յուրակումներ, վեցակումներ քնորոշումները թեև դեռևս հաստատ չեն մտել դրականության մեջ, բայց արդեն գործածվել են այնտեղ մի քանի հեղինակների կողմից:

Նախքան բուն նյութի քննությանն անցնելը՝ Գ. Զաֆուկյանը թվարկում է այն սկզբունքները, որոնց հիման վրա ինքը կատարել է հայերենի հոլովական համակարգի նկարագրությունը, դրանք են՝ լեզվի արտահայտության և բովանդակության (ձևի և բովանդակության) պլանների, անփոփոխականների և փոփոխականների (ինվարիանտների և վարիանտների), լեզվի քննության տարբերակարգակների, համաժամանակյա և տարաժամանակյա տեսանկյունների, կառուցվածքի և նորմայի, բերականական համանունության և բաղմիմաստության տարբերումը, գուգաձևության (իզոմորֆիզմի), նյութի քննության ենթադասության (աստիճանականության), քննությունը արտահայտման պլանից սկսելու և ուրիշ միջոցների կիրառումը:

Իր ուսումնասիրությունը հեղինակը իրավացիորեն համարում է ոչ թե զուտ կառուցվածքային, այլ կառուցվածքա-իմաստային կամ հարաբերակցային:

Անցնելով քերականական կարգերի հարցին՝ հեղինակը նենց սկզբից տալիս է առնվազն երկու ձևերի հակադրության քերականության անկյունաքարային դրույթի իր ձևակերպումը՝ «Քերականական կարգ (կատեգորիա) առկա է պետք է հասկանալ արտահայտության պլանում (ձևականորեն) տարբերվող և բովանդակության պլանում հակադրվող երկու կամ ավելի միավորների (քերականությունների, գրամմաների) խմբերը»:

Զաֆուկյանը արդի հայերենի զոյականի հոլովման համակարգում քերականական շորս կարգ է դիտում՝ թվի, հոլովի, դասի, որոշյալության, որոնք արտահայտվում են անվանը հատուկ թերմայիներով՝ վերջմասնիկներով՝ կամ հերթագայությամբ (հոլովակերտ հնչյունափոխություն):

Հեղինակը տարբերակում է այդ թերմայիներն ըստ նշանակության՝ թվանիշ, հոլովանիշ, որոշյալության (հոգ), հետո ըստ վերջմասնիկների կցման հաջորդականության նրանց բաժանում է շորս խմբի. ա) թվանիշ (եւ, նեւ, և այլն), բ) առաջին կարգի հոլովանիշ (ի, ա, ու և այլն), գ) երկրորդ կարգի հոլովանիշ (ից, ով և այլն), դ) հոգեր:

Ապա տարբերում է հիմքերը՝ ոչ նշանակիր, միանշանակիր, երկնշանակիր և այլն, այսինքն՝ քերականական յուրաքանչյուր նոր ձևի ու իմաստի համար նախկին ձևն ու իմաստն արտահայտող միավորը լինում է հիմք, այստեղից տարբերում է նաև մաքուր հիմքեր ու ձևավոր հիմքեր և այս վերջինների տեսակները:

Անցնելով թվի քերականական կարգին՝ հեղինակը իր տարբերած հոգնանիշ (հոգնակիակերտ) ութ վերջավորությունների (եւ, նեւ, թկ, այլ, ք, անք, ենք, ոնք) ամբողջությունը իրավացիորեն դիտում է իբրև մեկ անփոփոխակ (հիմնաձև) ութ փոփոխակներով (անդամներով), որը հակադրվում է եզակին արտահայտող միանդամանի անփոփոխակին, զրո վերջավորությամբ: Ապա հայերենում անվան թվի քերականական կարգի մանրամասն նկարագրություն է տրվում:

Նկարագրության իր եղանակի կիրառմամբ՝ հեղինակը մի քանի էջի վրա շատ շոշափելի ներկայացրել է հայերենում անվան եզակիության և հոգնակիության մի շարք առանձնահատկություններ, որոնցից մի քանիսը, անպայման, ինքն է դիտել, իսկ մյուսներն առնելով դասական քերականությունից նոր ձևով է ներկայացրել: Հեղինակի որոշ դրույթներ կարող են վիճելի լինել, սակայն ակնհայտ է նրա նկարագրման եզակակի նպատակաւացությունը, հատկությունը: Սղեպ, այստեղ օգտակար է համաժամանակյա հայեցակետից տարաժամանակյա քննության անցնելը և կանայք ու մարդիկ հոգնակիների կազմության պատմական համոզիչ բացատրություն սալը, ըստ որի արդի հայերենում իսկական հոգնանիշ վերջավորություններ են եւ-ը և նեւ-ը, իսկ մյուսները (իկ, այլ և այլն) նախապես լինելով հավաքականություն ցույց տվող ածանցներ մինչև այժմ էլ ինչ-որ չափով պահպանել են այդ իմաստը:

Հոլովի քերականական կարգի քննությունը հեղինակն ուսում է առաջին կարգի (տրականի) հոլովակերտ թերմայիների (հոլովիչների) թվարկմամբ՝ հաշվելով 28 թերմայի, այդ թվում 10 վերջավորություն՝ ի, ոչ, վա և այլն, 8 հերթագայություն՝ այ/ո (հայր-հոր), ու/ա (տուն-տան) և այլն: Ապա խոսում է երկրորդ կարգի հոլովական թերմայիների մասին, որոնք միայն վերջավորություններ են, թվով 5՝ ից, ց, ով, ք, ում: Այս բոլոր 23 թերմայիներին հակադրվում է զրո վերջավորությունը: Այդպիսով, առանձնացված են հայերենի հոլովանիշ կամ հոլովակերտ 24 թերմայիներ: Այստեղ կան որոշ վիճելի կետեր, օրինակ, որքանով է ճիշտ անուն-անուան-անվան թերմայի համարել ունվա հերթագայություն, երբ հոլովանիշ է միայն ավելացող ա-ն, իսկ ու-ով հնչյունափոխությունը հոլովանիշ չէ: Մյուս կողմից, մեր կարծիքով, ճիշտ են ու տեղին մի քանի նորություններ, օրինակ, մինչ այժմ ընդունված մեկ ու հոլովիչի մեջ երկու թերմայի տեսնելը՝ վերջավորություն (ծի-ծիու) և հերթագայություն (ղինի-ղինու), իրոք, երկրորդ դեպքում համաժամանակյա քննության հայեցակետից (անկախ թերմայի ծագումից) հոլովակերտ հնչյունափոխություն է կատարվում, այսինքն տոկա է հերթագայություն: Ըստ երևույթին, ճիշտ է

նաև մինչ այժմ ընդունված ուղի վերջավորության (բացառականի) փոխարեն սոսկ ց դիտելը, քանի որ այն դրվում է միշտ առաջին կարգի ու թեքության (վրա հերթագայության) վրա՝ օրնոց, զինոց, ուր ուն հիմքային է, մինչդեռ ից-ի համար բացի սեղանից ու նման դեպքերից ունենք նաև ընկերոց, հորեց և նման դեպքեր:

Եվ այսպես, ասպարեզում գնելով 24 հոլովանիչ թեքություններ՝ հեղինակը կարծես ասում է՝ հոլով ըմբռնումը դրանց հետ է կապված, և դրանցից դուրս անվան մյուս թեքությունները հոլովանիչ չեն, ուստի այդ վերջինների առկայությունը կամ բացակայությունը բառի մեջ հոլովակերտ արժեք չունի:

Երեք խմբի բաժանելով երկրորդ կարգի հոլովանիչ թեքությունները, դրանց կողքին գնելով առաջին կարգի թեքությունների և դրո վերջավորության շարքը ստանում է հոլովանիչ թեքությունների հինգ խումբ. 1) զրո խումբ, 2) 18 փոփոխականներով խումբ, 3) ից, ց խումբ (2 փոփոխականով), 4) ով, ր խումբ (2 փոփոխականով) և 5) ում խումբ: Սրանք էլ զոյացնում են հայերենի իրական հինգ հոլովները, որոնք, ավանդական անունները գործածելու դեպքում, կարող են կոչվել ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական (հեղինակը, իրավացիորեն, ավելի ճիշտ է համարում համապատասխանաբար՝ բացարձակ, հանգական կամ հատկացական, անջատական, ուղեկցային և ներգոյական անվանումները, բայց, հարկավ, իմաստ չունի ավանդական անուններից հրաժարվելը):

Հոլովանիչ թեքությունների հինգ խմբերը հեղինակը կոչում է վիճակագրականորեն ամենից հաճախ գործածվող (կամ միակը հանդիսացող) ի թեքությունների անուններով, այն է՝ 1) զրոյի խումբ, 2) ի-ի խումբ, 3) ից-ի խումբ, 4) ով-ի խումբ, 5) ում-ի խումբ: Այսպիսի տարբերակումն, անշուշտ, շատ հաջող է, սակայն հեղինակը ամեն մի խմբի համար իբրև նմուշ վերցրած ձևությամբ համարում է անփոփոխակ, իսկ այդ խմբում եղած մյուս ձևությունները փոփոխականներ (իր այդ դրույթը հեղինակն ավելի հստակ շարադրել է «Ժամանակակից հայերենի հոլովները» բովանդակալից հոդվածում — «Ուղեկցական դպրոց», 1967, № 4): Իսկում է, այն քան էլ անխոցելի չէ թեքությունների մի խմբում մյուսներից ավելի հաճախ գործածվող թեքությամբ անփոփոխակ կամ էական (ռեկանտ) համարելը: Ձև, որ նույն խմբի ամեն մի թեքությամբ կողմից ձևավորվող բառերի համար էական է, մեծ մասամբ միակը: Գործածման հաճախականությունը, ձևավորվող բառերի քանակի մեծությունը հաղիվ թե իրավունք ունենան տվյալ թեքություն էական կամ անփոփոխակ դարձնելու: Ըստ երևույթին, ավելի լավ կլինեն, եթե հեղինակն այս դեպքում էլ վարվեր այնպես, ինչպես նա տարբերել է թվանիչ թեքությունների հակադիր անփոփոխականները (եղակիի զրո վերջավորություն և հոգնակերտ թեքությունների շարքի ամբողջություն): Այդ դեպքում հոլովական երկրորդ շարքում անփոփոխակ, էական կլինեին 18 թեքությունների ամբողջությունը, իսկ նրանցից յուրաքանչյուրը (այդ թվում և ի-ն)՝ փոփոխականներ, նույնը և ից, ց, ինչպես և ով, ր դեպքերում:

Արտահայտման պլանից տնցնելով բովանդակության պլանին՝ հեղինակը փորձում է տարբերել հինգ հոլովները իմաստային առանձնահատկությունները ըստ թեքությունների իմաստային փոխհարաբերության: Նշելով, որ դրո վերջավորությանն են հակադրվում թեքությային չորս խմբերը, հեղինակը գտնում է, որ զրո վերջավորությամբ անունն ունենում է հոլովական իմաստի անսահմանափակություն, իսկ մյուս թեքությունները հոլովական իմաստի սահմանափակություն են հաղորդում բառերին՝ յուրաքանչյուր խմբի հոլովանիչները իրենց հատուկ իմաստներով:

Հոլովներին նվիրված այս բաժնում լեզվաբանական նկարագրությունները և վերլուծությունները համոզիչ են, մանավանդ որևէ առարկություն չի վերցնում հայերենում միայն հինգ հոլովի առկայության հիմնավորումը:

Հեղինակի հակիրճ, բայց և սպառիչ բացատրությամբ ցուցադրվում է, թե ինչպես ավանդաբար առանձին ընդունվող սեռական և տրական հոլովները սոսկ միևնույն հոլովի (տրականի) դիրքային տարբերակներն են, իսկ հայցականի անունով հայտնի միավորները՝ մերթ ուղղականի, մերթ տրականի դիրքային տարբերակները: Այլ խոսքով, հինգ հոլովներից յուրաքանչյուրը ունենում է շարահյուսական (նաև ձևաբանական) դիրքային տարբերակներ, որոնք չպետք է շփոթել հոլովական անփոփոխականների հետ, վերջիններս հայերենում միայն հինգն են, իսկ դիրքային տարբերակները շատ: Այդ շատերից է տրականի որոշիչ հոգ չվերցնող տարբերակը, որ շարահյուսորեն լինում է զոյականի կամ անդեմ բայի լրացում (ի դեպ, նաև ստորոկայինական վերադիր): Ավանդականորեն այդ տարբերակը սեռական հոլով է կոչվում, որ ճիշտ չէ: Սակայն իրական հոլովներ (անփոփոխականների) բոլոր դիրքային տարբերակները չէ, որ ավանդականորեն առանձին հոլով են համարվում, օրինակ, ուղղականի՝ որոշիչ հոգ չվերցնող և շարահյուսական առանձին կիրառություն ունեցող (կոչական) դիրքային տարբերակը ավանդականորեն հոլով չի

համարվել, թեև դրա համար նա նույնքան իրավունք ունեն, որքան և սեռականը: Հեղինակը շատ համոզիչ ապացուցում է, որ իողը, ինչպես և անձի ու ոչ անձի առումները տարբեր են ինչպիսիք քերականական կարգից:

Սակայն մյուս կողմից թե՛ հոլովների իմաստների (ձևաբանական մակարդակում), թե՛ նրանց շարահյուսական կիրառության նախը պարզաբանելիս՝ հեղինակը, մեր պատկերացմամբ, ինչ-որ չափով կաշկանդված է ավանդական քերականագիտության բմբունումներով: Մասնավորապես մտածել է տալիս ամեն մի հոլովի կիրառության ղեկավարը իմնական և ոչ իմնական խմբերի բաժանելը: Օրինակ, մենք չենք տեսնում այն ամուր իմքը, որը թույլ է տալիս ենթական (անվանված է անկախ անդամ, որ համոզիչ չէ, հնթական կախված է դիմավոր բայից) կոշականը և ուղղական պարագայներն ու խնդիրը համարել ուղղական հոլովի իմնական կիրառություններ, իսկ ուղղական որոշիչը, ստորոգելիական վերադիրը և մյուսները ոչ իմնական: Արդյո՞ք ամեն կիրառություն ինքնուրունի է հիմնական չէ և արդյո՞ք կիրառման բանակի հաճախականությունը (որը դեռ ստուգված էլ չէ) այդ կիրառումը հիմնական է դարձնում:

Աշխատության նախավերջին բաժինը նվիրված է դասի քերականական կարգին, ուր կան շատ ուշադրավ դիտողություններ գոյականների իմաստային առանձնահատկությունների և նրանց արտահայտման պլանի վերաբերյալ, որ նույնանում է թվանիշ և հոլովանիշ թեքությունների դործածությանը:

Մեր կարծիքով, զրբում, եթե միանգամայն փայլուն են արտահայտման պլանների բնությունները, սպա էրբմն մտածելու տեղիք են տալիս ըստ բովանդակության պլանի բացատրությունները:

Վերջին բաժնում դարձյալ շատ հակիրճ և բովանդակալից խոսվում է որոշիչ վերջավորությունների մասին:

Պրոֆ. Գ. Ջահուկյանի այս աշխատությունը հրաշալի ապացույց է նաև այն բանի, թե ինչպես քերականական նկարագրության նոր միջոցների օգտագործմամբ հակիրճ խոսքի մեջ կարելի է չափավանց հարուստ նյութ ընդգրկել և լեզվական երևույթները ներկայացնել առավելագույն հստակությամբ:

Ճիշտ է, հայերենի շատ մասնագետների համար առայժմ առավել կամ պակաս չափով անսովոր է լեզվաբանական քննության այս ոճը, սակայն նրան ընտելանալն էլ դժվար չէ: Լավ կլիներ, իհարկե, եթե Գ. Ջահուկյանը փոքր-ինչ ուշադրություն դարձներ նաև շարադրման մասնկալարմական կողմի վրա՝ հաշվի առնելով, որ քննության իր եղանակը, լեզվաբանական իր կիրառած ոճը նորամուտ է հայ լեզվաբանության մեջ և անսովոր (լավ կլիներ, եթե օրինակները, նմուշները ավելի հաճախ տրվեին բացատրությունները ցուցադրելու համար): Մյուս կողմից, մեր կարծիքով, այժմ արդեն օրակարգի հարց է դարձել բանասիրական ֆակուլտետների բոլոր բաժիններում լրջորեն ուսուցանել կառուցվածքային լեզվաբանության կարևոր սկզբունքները:

Նոր լեզվաբանության առանձնահատկություններից մեկն էլ գիտական անվանումների (տերմինների) առատությունն է (որ հնարավորություն է տալիս փոքրածավալ խոսքի մեջ ավելի հստակ բովանդակություն պարփակելու): Գ. Ջահուկյանը հաջողությամբ գործածել է բազմաթիվ այդպիսի անվանումներ (որոնց մեծ մասը օտար անվանումների հայերեն թարգմանություններ են, մի մասն էլ անկախ գոյացած), հիշենք մի քանիսը՝ շեշտակրություն, անշեշտակրություն, նշանակիր անդամ, ոչ նշանակիր (գուցե լավ է՝ աննշանակիր) անդամ, բերականույթ, գուգածկություն, շարակարգային, համալարծություն, անկայացում, առողանույթ, մասնիկավորում, րվանիշ, հոլովանիշ, դասանիշ, հոգնանիշ, իգականանիշ, ձևույթ, ձևակ, այլածակ, ներքաղայություն, մականնչույթ, միարվություն, անմիարվություն, իմաստորոշություն, մասնիկորոշություն և այլն (անվանումներից մի քանիսը հեղինակի ստեղծածն են): Հայերենի մեջ առատ մուտք գործող այս կարգի անվանումները Գ. Ջահուկյանի զրբում գործածված են տեղին, ներդաշնակորեն, բնականոն: Սա, անշուշտ, նաև հայերեն գիտական լեզվի առաջընթացի ցուցանիշ է:

Սակայն հետաքրքրական է, որ նոր լեզվաբանության՝ տվյալ զրբի մեջ անհրաժեշտ զրեթե բոլոր անվանումները օգտագործելով հայերեն թարգմանությամբ և հասնելով անկասկած հաջողության, հեղինակը չթարգմանված է գործածում մի քանի նախկինում թարգմանված բառեր, ինչպես՝ Լուսալ (փուլ, շրջան), տեղեկեց (հակում, միտում), օրեկտ (առարկա) կամ եղա՝ լավագույն թարգմանությունները չի օգտագործում, օրինակ տրալիցիան կամ չի թարգմանում՝ կամ թարգմանում է ավանդություն (լավ է՝ ավանդույթ), математикը թարգմանում է մեկնական (փոխանակ՝ մեկնական):

Քանի որ լեզվաբանական նոր անվանումները առաջիկայում ավելի ու ավելի պետք է օգտագործվեն հայ լեզվաբանության մեջ, կարևոր է այժմվանից անվանումների միակերպ ցանկի ստեղծումը: Օրինակ, է. Աղայանի վերոհիշյալ մենագրության և Գ. Ջահուկյանի ներկա աշխատության մեջ անվանումների զործածման ակնառու անմիակերպություն կա, այսինքն՝ մի շարք դեպքերում միևնույն հասկացության համար հեղինակները տարբեր անվանումներ են զործածում (կամ միևնույն ալլադգի անվանման դիմաց տարբեր հայերեն թարգմանություններ դնում): Ստորև բերում ենք նման տարբերակների մի քանի օրինակներ.

	Է. Աղայանի մոտ	Գ. Ջահուկյանի մոտ
инвариант	անալակ	անփոփոխակ
вариант	տարբերակ	փոփոխակ (տարբերակ)
маркированный	նշույթավոր	նշանակիր
немаркированный	աննշույթ	ոչ նշանակիր
синхронный	համամանակյա	համաժամանակյա
диахронический	տարամանակյա	տարաժամանակյա
релевантный	արժույթային	էական
морфа	ձևակ	թեքույթ, ձևակ
норма	կանոն	չի թարգմանում
функция	դործառույթ	չի թարգմանում
изоморфизм	համասեռություն	զուգաձևություն
изоморфный	համասեռ	զուգաձև

Իժվար չէ նկատել, որ հեղինակներից մերթ մեկի, մերթ մյուսի զործածած անվանումն է ավելի հաջող: Քանի որ գիտական անվանումները շատ կարևոր դեր ունեն նոր լեզվաբանության մեջ, անհրաժեշտ է այժմ արդեն կրկնակ անվանումներից պահել ավելի հաջող զուգահեռները, իսկ տարբերակները կամ ալլ իմաստով զործածել կամ հանել զործածությունից:

Ավարտելով պրոֆ. Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը» լեզվական իրողությունների առատությամբ և լեզվաբանի վերլուծող, թափանցող մտքով հագեցված աշխատության ընթերցումը՝ չի կարելի անկեղծ ուրախությամբ չնշել մեր լեզվաբանական դիտության նոր նվաճումը:

Թ. ԻՇԽԱՆՅԱՆ